

ոչն լսէ՝ մահու մեռցի: Եւ եթէ՛ յաշխարհի աստ ապաշխարութեանս՝ այսպէս ոչ ապաշխարիցէք, իսկ յաշխարհին հանդերձեալ՝ զի գործիցէք:

Նզնկայ Բ.

զ ուժք

Ի սուրբ քառասնից աղուհացսն, և ի չորքըշաբաթ և յուրբաթ և ի շաբաթու, և ի կիրակէի, և ի տէրունական տօնսն, պարտ և պատշաճ է ամենայն հաւատացելոց զգուշանալ յանկողնոյ ամուսնոյ իւրոյ, զի աւուրք սրբութեան են, և ի նոսին կատարին խորհուրդք տնօրինականք վրկութեան մերոյ, և պարտէ աղօթից, ուխտից պարագել, որպէս ասէ՝ երանելի առաքեալն Պողոս, և ապա ի նոյն դառնալ, զի մի փորձեսցի:

Ներսիսի
շնորհաւոր
ճէ ունկը

Բ. Ժողովոյն

Ստոյ

է է

Որ ամուսնանայ ընդ անօրինի՝ նոյն է, և թէ զանօրէնն դարձուցանէ, ամ մի:

Ձպսակն ընտրութեամբ արացսն, զ, ծնընդուք հեռացեալ՝ յազգակցութենէ արեան, փեսայն՝ մի պակաս քան զԹԻ. ամն, և հարսն քան զԹԲ:

ԺԹ.

ՅԱՂԱԳՍ ԿԱՆԱՆՅ ԱՆԱՐԺԱՆ ԳՈՐԾՈՑ:

Հալց կետեւ-
ւողաց Ա-
ռաքելոցն
ԺԹ ճը

Նելկոյ Բ.

ծԹ միե

կե մլա

ձը մծդ

Կեսաբելոյ

ա յԺա

Նելոյ Կեսաբելոյ

բ իբ

Կին ոք ուրուք ստահակ իցէ, եթէ ի լսուման՝ նախ քան զպսակն դողացի՝ պղծեալ զամուսնութիւնն, իբրև զպոռնիկն իսկ կանոնեցաք նմա ապաշխարել, ապա և օրհնիլ յերիցուէն, և պատուական պսակին, և սուրբ հարսանեացն լիցի արժանի: Ոչ է պարտ առն և կնոջ ի միասին մտանել ի բաղանիս:

Եթէ ոք կին՝ յաղագս ճգնութեան փոքրեսցէ զհերս իւր, և առնական ձև զգեցցի, նզովեալ եղիցի: Ոչ է պարտ զպառաւունս՝ առաջոյ նստեալս լինել:

Վասն կանանց՝ որ ընդ արամբ են, և շնան. թէ թողցեն ի բաց զպղծութիւնն՝ և յապաշխարութիւն եկեսցեն, Ե. ամ առ դրանն՝ ընդ ձեռամբ կացցեն, և Բ. ամ մտեալ յեկեղեցի՝ ելցէ ընդ ապաշխարողս, ըննեալ զվարսն՝ տրօք տնանկաց քաւեալ զմեղս իւր՝ հաղորդելոյ օրինացն արժանի լիցին:

Կին՝ եթէ լինիցի երկուց եղբարց, մերժեսցին յիբերաց, կին՝ մինչև ի մահ ընդ ունկնդիրս կացցէ, նոյնպէս և այրն, ապա ըստ վարուցն՝ իբրու թէ զղջացեալ իցեն ի մեղացն, ի ձեռն ողորմութեան և պահոց, ի վախճանի իւրեանց հաղորդեսցին յե-

տին թոշակին արժանի լիցին։ Ապա եթէ՝ մինչ ի գուգուլթեան են՝ մահ տիրեսցէ, գոր ասէ գիրն, մահ մեղաւորին չար է, գրկեալ եղիցին ի թոշակէն, բայց որ մնայ՝ այնպիսոյն դժուարագոյն է ապաշխարութիւնն, իշխան լիցի վարդապետն ապաշխարութիւն դնել խստագոյն, որպէս և կամեսցի՝ ի ցերմութիւն ապաշխարութեան հայեցեալ, և յողորմութիւն գթոյ տնանկաց, և մեծամեծ արօք իշխան լիցի կարճել զժամանակն։

Կանգըեալ
ժգ յժգ

Կին ոք՝ որպէս թէ պահս ինչ համարէ փոխել զգզեստ կանանց՝ և զարանց գզեստ ինչ ազանիցի, կամ զկերպարանս այնպիսի ինչ ստասցի, նզովեալ եղիցի։

ժգ յժգ

Կին՝ որ թողու զայր իւր՝ և հեռանայ ի նմանէ, որպէս թէ ի հաւատոս կացցէ առանց կամաց առնն, կամ անզոսնեացէ զայր իւր, թէ ես գեղատեսիլ երեսս ունիմ, կամ աղջիկ իմ է ընչաւէտ քան գքեզ՝ ելանիցէ յառնէ իւրմէ, պատուհաս կրեսցէ, և նզովեսցեն, և յեկեղեցոյ ի բաց հանցեն։

ժէ յժէ

Եթէ ոք ի կանանց կարծեսցէ իբրև աստուած պաշտութիւն, և զհերս փոքրեսցէ, գոր ետ Աստուած ի յեշատակ հնազանդութեան, իբր թէ ընդ ոտն եհար և արհամարհեաց զհրամանն հնազանդութեան, նզովեալ եղիցի։

Թաղէսու ա-
ւաքելոյն
իբ. նձէ

Կարձեալ ասէ առաքեալն՝ թէ որ առնակին իցէ՝ և շնացաւ, ժԲ ամ ապաշխարեսցէ արտաքոյ՝ արտասուօք զամենայն սրբապահս, յետ զ՝ ամի անցանելոյ՝ շաբաթու և կիրակէի, և ի տէրունական տօնս՝ լուծումն արասցէ, և ի տարւոջն՝ զերրորդ մասն պահեսցէ, և ապա մտցէ յեկեղեցի և հաղորդեսցի։

Փելիպոսի ա-
ւաքելոյն
ը շգ

Վանանց՝ եթէ նոյն ծորումն լինիցի ախտակրական արեան, և խափանէ զայգուն և զերեկոյին ազօթսն՝ մերձ կալով յեկեղեցին, արհամարհեաց զմըկրտութեան ջուրն, նզովեալ է։

Բարդէ Բ.
խ չժե

Կին՝ որ առանց ընկերի ի ճանապարհ երթայ, և ի պղծութիւն տնկանի, գ. ամ ապաշխարեսցէ, և արօք տնանկաց՝ արժանի լիցի օրինաց։

խա չժգ

Կին՝ որ յանասուն մատչի պղծիլ ի նմանէ, կցորդ է նա անասնազանցի։

ժը չլգ

Կին քահանայի՝ թէ փոքրեսցէ զհերս իւր, և զգզն այլակերպէ, եղիցի նզովեալ, և գ. ամ ապաշխարեսցէ։

ճիգ չղը

Կին՝ մի իշխեսցէ զհանդերձ առն զգեներու՝ և ելանել ի հրապարակս, ապա եթէ յանդգնի, ա. ամ ապաշխարեսցէ։

ճիւղ պ Ոչ է արժան օթեանս առնել կնոջ ի թա-
տերս կամ ի վստառս, և եթէ ոք յանդգնի, նգո-
վեալ եղիցի:

ճիզ պա Ոչ է արժան կնոջ մատչիլ և նայել յանասուն՝
յորժամ մերձեանս յերեարս, կամ համբուրել, և եթէ
ոք համարձակի, նգովեալ եղիցի:

ճիէ պբ Ոչ է արժան կնոջ առ գինեմոյս հուպ լինել
և ճաշակել ընդ նոսա՝ այլ ուրոյն նստել, և ցած
կալ, և սպաս ունել եկեղեցւոյն, և եթէ ոք յանդրգ-
նի, նգովեալ եղիցի:

ճիբ պգ Ոչ է արժան կնոջ յաւուրս տօնի՝ զինքն այ-
լակերպել, և յեկեղեցի ընթանալ՝ որպէս ի պոռճն-
կանոց, և եթէ ոք յանդգնի, քահանայն արգելցէ ի
մարմնոյ Տեառն, և եղիցի նգովեալ:

ճիթ պդ Մի իշխեսցէ կին մարդ՝ գենուլ զանասուն,
կամ որս առնել, կամ հնձան հարկանել, կամ առ-
նապէս վարիլ ի վար և ի հունձ, և հոլանել զինքն՝
և յայտնել զամօթ, և եթէ ոք յանդգնի, նգովեալ
եղիցի:

Ներսիսէ Բ. Վասն որ ի կանանց օրինին են, և անխտիր
ժը ուլե կան՝ և չհամարին ինչ, դ. ամ ապաշխարեսցէ:
Ներսիսի Շնոր. Կանայք՝ որ արկանեն արական նիւթ և պղղ-
ղգ ունծող ծեն գմիմեանս, և որք արկանեն մատուռս ի ծնըն-
դականս իւրեանց, մեծ ջանիւ հողորդին:

ի.

ՅԱՂԱԳՍ ՀԱԻԱՏԱՑԵԱԼ ԹԱԳԱՒՈՐԱՑ

Առաքելոց իբ իբ Կարգեցին առաքեալք և եղին հաստատու-
թեամբ, եթէ թագաւորք՝ որք ունին զհաւատս ե-
կեղեցւոյ սրբոյ, և խոստովանին զՔրիստոս, իշխա-
նութիւն լիցի ընդ քահանայս ի բէմի կալ, իբրև
զՌաւիթն՝ և որք իբրև զնոյն էին, ըստ մարգարէ-
ութեանն՝ եթէ թագաւոր յուսացաւ ի Տէր՝ յողոր-
մութենէ Բարձրելոյն նա մի՛ զրկեսցի. բայց յայլ
ինչ մի՛ համարձակեսցի, գուցէ՝ որպէս զՈղբայն
պատուհասեալ իջցէ ի վայր:

Առաքելոց է ձեռն կղե-
մայ. Եթէ ոք թշնամանեսցէ զթագաւոր և զիշխանն
հը ճժբ իրաւաբար, պատուհաս կրեսցէ, եթէ ժառանգաւոր
ից՝ լուծցի, եթէ ժողովրդական՝ որոչեսցի:

ԻԱ.

ՅԱՂԱԳՍ ԶԶԲԱՂԵԼՈՅ ԵԿԵՂԵՑԱԿԱՆԱՑ ՅԱՇԽԱՐՀԱԿԱՆ ՀՈԳՍ.

Առաքելոց է
ձեռն կղե-
մայ.
զ խ
հե ճթ

Եպիսկոպոս կամ երեց, կամ սարկաւազ, դաշ-
խարհական հոգս յանձն մի առցէ, ապա թէ ոչ՝
լուծցի:

հէ ճժա

Ասացաք՝ եթէ ոչ է պարտ եպիսկոպոսի ար-
կանել զինքն յերկրաւոր հոգս, այլ պարապել եկե-
ղեցական պիտոյիցն, ապա թէ ոչ ի բաց դիցէ զի
ոչ կարէ երկուց տէրանց ծառայել ըստ տէրունա-
կան հրամանին:

Եպիսկոպոս, կամ երեց, կամ սարկաւազ, զօ-
րականութեանց պարապեալ, և զերկոսեանն առնել
կամեցեալ, ունիլ զՀռովմայեցոց իշխանութիւնս և
զքահանայութիւն, լուծանել պարտ է, քանզի կայ-
սերն՝ կայսեր, և Աստուծոյն՝ Աստուծոյ:

ԻԲ.

ՅԱՂԱԳՍ ԵԿԵՂԵՑԱԿԱՆՈՅ՝ ՈՐՔ ՈՉ ՀԱՂՈՐԴԻՆ Ի ՍԱՀՄԱ-
ՆԵԱԼ ԺՈՂՈՎՍ.

Առաքելոց է
ձեռն կղե-
մայ.
ը խբ

Եպիսկոպոս, կամ երեց, կամ սարկաւազ, որ
ժողովոց՝ ոչ հաղորդեսցի, զպատճառն սասացէ, ե-
թէ իցէ իրաւացի՝ թողութեան հասցէ, ապա թէ ոչ
սասացէ՝ որոշեսցի, որպէս պատճառ մնասու եղեալ
ժողովրդեանն՝ և կարծիս տուեալ զբրիցուէն՝ որ
մատոյցն՝ որպէս ոչ առողջութեամբ մատուցեալ:

Նիկիոյ Բ.
կդ մ
Լաւորէկեայ
լթ նիբ

Ոչ է պարտ եպիսկոպոսին ի ժողովս կոչելսյ
արհամարհել և չերթալ, բայց եթէ՝ հիւանդ լինիցի:

Չէ արժան եպիսկոպոսաց՝ յորժամ կոչին ի
ժողով ուրեք, կամ ի ժողովուրդ՝ արհամարհել,
եթէ տկարք իցեն և հիւանդութեամբ, այլ երթալ և ու-
սուցանել կամ ուսանիլ առ ի հաստատութիւն և ի
հաւատս եկեղեցոյ, ապա եթէ՝ արհամարհեն, ան-
ձանց մեղս զնեն և կամաց:

Սարգեկեայ
զ նծ

Եթէ դէպ լինիցի միում գաւառի, յորում բա-
զում եպիսկոպոսք են՝ միոյ եպիսկոպոսին մնալ, և
նա յիմեքէ ծուլութենէ՝ ոչ կամեոցի գնալ և հա-
ւանակից լինել կարգաւորութեան եպիսկոպոսին:
Իսկ եպիսկոպոսուքն ժողովեալ՝ աղաչեսցեն լինել
կարգաւորութեան՝ զոր նոքայն խնդրեն, եպիսկո-

պոս՝ որ մնացն՝ յիշումն առնել ի ձեռն թղթոյ Հայրապետին, այսինքն մայրաքաղաքի եպիսկոպոսին, և ալաչեն բազմութիւնք՝ հոյիւ տալ նոցա, և ինձ այսպէս թուի թէ՝ բարւոք ասեն և սմա մնալ, զի եկեսցէ, ապա եթէ՝ և ի ձեռն թղթոյ աղաչեցեալ՝ ոչ եկեսցէ, և ոչ թղթով պատասխանի արասցէ, պիտոյ է՝ զկամա բազմութեան առնել, այլ պարտ է կոչել՝ և որք մօտաւոր են ի գաւառին եպիսկոպոսք, առ ի ձեռնադրութիւն մայրաքաղաքի եպիսկոպոսին. և ոչ է պարտ վայրապար կարգաւորել եպիսկոպոսին ի զեղջ ուրեք, կամ ի դուզնաքեայ քաղաքի, որում և մի երեց բաւական է; քանզի ոչ է անդ կարևոր եպիսկոպոսի կարգել. զի մի արհամարհեսցի անուն և իշխանութիւն եպիսկոպոսին. այլ գաւառի եպիսկոպոսք՝ որպէս յառաջագոյն ասացի՝ յայնպիսի քաղաքս կարգել պարտին եպիսկոպոսունք, սւր և առնէին եպիսկոպոսք. ապա եթէ՝ գտցի այնպէս բազմութիւն թուովք՝ ժողովուրդք, և քաղաք, զի արժան է նմա եպիսկոպոս ընդունել՝ առցէ. թէ ամենեցուն հաճոյ թուեսցի, այսմ պատասխանեցին ամենեքեան հաճոյ է:

ԻԳ.

ՅԱՂԱԳՍ ԱՆԱՐԺԱՆ ԳՈՐԾՈՑ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆՍՑ.

Առաքելոց է
ձեռն կղէ~

մայ,
 Իբ յժգ
 Նեկէոյ Բ
 Լբ ճղը
 Լգ մբ
 հա մէ
 զա մծէ
 ճը մհդ
 ճժ մհզ

Ժողովրդական ոք զինքն կրճատեաց, ի բաց որոշեսցի, երեք ամ, քանզի դրժող է կենաց իւրոց: Եթէ ուրուք խօսեալ զաղջիկ՝ ապականեսցի ընդ քեռն նորա, և դարձեալ ապականեսցի ընդ խօսեցելոյն, ինքն և որ գիտակիցքն են՝ ժե. ամ ապաշխարեսցեն, և ապա հաղորդեսցին: Երեխայն՝ կամ դադարեսցի ի մեղանչելոյն, կամ ի բաց որոշեսցի: Եթէ ոք ամբարտաւանելով դարչեսցի ի մարտիրոսաց ժողովոյն՝ նզովեսցի: Ոչ է պարտ ժողովրդականաց՝ փոխանակ սաղմոսասացի, կամ գրակարդացի՝ առանձին սաղմոսել կամ գիրս կարդալ յեկեղեցւոց: Ոչ է պարտ քրիստոնէից՝ ի հարսանիս ծափս հարկանել կամ երգս ինչ անպատեհս երգել: Ոչ է պարտ քրիստոնէից՝ հանճանակօք գինարբուաց վարիլ:

Կեանքերոյ զ յԺԳ Որք այրի մնացեալ են յետ ամաց ինչ՝ և կամ բնաւ առն չիցէ լեալ՝ և ի մեղս անկանիցի՝ ի պոռնկութիւն, կամ եղև մեծ ժողովոյն, եթէ ամենեւին դարձցին ի մեղացն, ապաշխարութիւն դնել ի վերայ նոցա, գ. ամս՝ առ դրանն ընդ ձեռամբ լինել, և բ. ամ՝ մտեալ յեկեղեցի՝ ելցէ ընդ ապաշխարողսն, և քննեալ և փորձեալ զվարսն՝ ողորմութեամբ և զթով տնանկաց սրբեալ զմեղս իւր՝ հաղորդեացի օրինաց, ապա եթէ դարձեալ թաթաւեսցի ընդ տիղմ մեղաց իւրոց, զ է. ամ ապաշխարութիւն կրեսցէ. բայց զխոնարհութիւն, զսէր և զյորդորումն և զոյս բարեաց անդադար սփռեսցէ:

Կանգրեայ իւ յԿԲ Եթէ ոք երթիցէ ի ժողովս մարտիրոսաց, զգոյշ և պատրաստ լիցի սրբութեան յորդորման, և պաշտաման, խոնարհութեան, աղօթից, զի մեծ վարձս առցէ, ապա եթէ ոք հրթիցէ ամբարտաւանութեամբ, հպարտութեամբ՝ ի ցոյցս տեսողաց, և զիտել զնմանիս իւր նզովեալ եղիցի:

Իգ յԿԳ Եթէ ոք՝ յառաջ քան զարձակել ժողովրդեան, կատարեալ հասակաւ և առողջ մարմնով՝ յառաջ քան զկատարել տէրունական խորհրդոյն՝ երթեալ հաց կերիցէ, կամ այլ ինչ, այնպիսին նզովեալ եղիցի:

Լատգրեայ ծ նլթ Չէ մարթ քրիստոնէից ի հարսանիս երթալ՝ կաքաւել կամ ի պարու գալ, այլ պարկեշտութեամբ ընթրիս ուտել և ճաշակել, որպէս և վայել է քրիստոնէից:

Փելլպոսի առաքելոյն է շե Կանանց՝ որ ըստ ամսական սահմանացն լինիցին, ըստ ապականածնութեան՝ արեան, այրն մի մերձեսցի ի նա ամուսնանալով, ապա եթէ՝ մերձեսցի, նզովեալ եղիցի:

Գրեգորի Լուս. ԺԺ շիգ Չէ մարթ քրիստոնէից՝ նկատել զխառնս առնանոց, առաւել կանանց պատուիրեն օրէնք, և որ գտցի ոք, նզովեալ լիցի:

Աթանասի Ժե շԺԲ Հարց.—Թէ ոք՝ յօժարեսցի ի մեղանչել, և խափանեսցի ի պատճառանաց ինչ՝ զինչ պարտ է առնել:

Պատաս.—Յայտ է՝ թէ ի շնորհացն Աստուծոյ պահեսցաւ, և վասն այնորիկ պարտ է գահանալ զճեառնէ Աստուծոյ մերմէ—Յիսուսէ Գրիստոսէ:

Բաբուշե. գ ոիէ Եթէ ոք ապականեաց զէջ յանկարծօրէն, մահապարտութեան դատաստան ընկալցի՝ բայց պարտ է հաւաստեալ և ոչ կերպարանօք ի վերայ հասանել քննութեամբ եղելոցն, և ի մէջ ածել զկիսն՝ և տեսանել առւրբք՝ զսաղմն թէ աննկար իցէ, թէ նկարեալ՝ այնպիսոյն: Երկրորդ՝ մահ համարեալ լի-

ցիւ. այնպիսոյն պարտ է ցօր մահուան իւրոյ կալ
յապաշխարութեան. բայց սահմանելի է ի վերայ
այնպիսոյն՝ կարճել զժամանակն, քանզի սահմանադ-
րութիւն՝ ոչ եթէ ժամանակին յոլովութիւն է՝ կա-
տարեալ ապաշխարութիւն, այլ բարւոյն ուղղութիւն
ի զղջումն եկելոցն:

իդ ոխը Որ հարուածովք մահու հարկանիցէ զընկեր
իւր, սպանող է, այնպիսոյն վրէժխնդրութիւն ե-
ղիցի:

Բարտղի Բ. Ու եթէ ոք մասհատի վասն պղծութեան, նզո-
հ չխե վեալ եղիցի, և մի ամ ապաշխարեսցէ, ապա եթէ՝
վասն հաւատոց է՝ պահեսցէ:

հզ չծա Նիթէ ոք զհեթանոսաց բարս ունիցի, զաւուրս
և զժամա խտրէ, և զհին և զնոր լուսնի, և զաւուրս
և զշարթս պահէ, որպէս հրէայ, և ոչ գործէ յա-
ւուր շարթու, ընդ խաչահանունսն եղիցի:

հթ չծդ Որ առ փափագ՝ զգերեզմանսն բանայ, գ. ամ
ընդ ունկնդիրսն, և մի ամ՝ ընդ ձեռամբ կացցէ,
հաղորդեսցի օրինաց:

ճթ չձդ Աշխարհական՝ եթէ բամբասէ զքահանայն, կամ
ապտակէ, ընդ խաչահանունսն եղիցի. բայց եթէ՝
բ. կամ գ. վկայիւք հաստատեսցի, ապա եպիսկո-
պոսն ունի իշխանութիւն դատել:

Ներսէսի մեծի Սւ քահանայական հրամանին՝ ժողովրդականք
լա ու հրաման մի տացեն, զի նոքա են ձուաջնորդք ձեր,
և նոցին եղբարք՝ ընդ նոցին ձեռամբք են, և ոչ
մարթէ ընդդէմ դառնալ, զի անկարգ է, զի իշխան
է կապելոյ և արձակելոյ:

Սահակայ մեծի Սւ որք սովորեցան տգիտութեամբ մեղանչել
լա ու ճժդ ժողովրդականք, որ զպատարագի կալի, և զճր-
գու բաժանեն ընդ քահանայս, և յիւրեանց տունս
տանեն յատճառաւ վանուց, յայսմհետէ յառաջ, մի
իշխեսցին բաժանել, ապա եթէ իցէ ոք՝ որ բաժա-
նիցէ, քահանայն՝ զպատարագն մի մատուցէ, զի
մի մեղաց այնպիսոյն հաղորդեսցի, քանզի ոչ է
բաժինն այն բարի՝ արարողաց պատարագին:

Յովհաննու Աշխարհական ոք՝ շարբեցութեան գտեալ՝ մի
խմաստաորել իշխեսցէ առանց զղջման ապաշխարութեան՝ հա-
բ ու ձխ զորդել, ապա եթէ ի նմին զեղխութեան մնացեալ՝
յերկարեսցի ոք, որոշեսցի:

Սեօնի կաթս- Գեղջ աւագ՝ որ յաղագս արքունի հարկաց
ղիկոսի զղուռն եկեղեցւոյն փակել տայ բռնաւորին, և Աս-
իբ ումէ տուածային ժամուն աղօթիցն խափան արասցէ,
նզովեսցի ի կեանս և ի մահ:

Վաչագանայ Աղուանից Քրիստոնեայ մարդ՝ որ կուռի, և արիւն հե-

աջըսել է ումնէ ժ ումնը դու, տարցեն առաջի եպիսկոպոսի, և ըստ օրինաց պատուհասեսցեն:

Սև որ՝ զկին թողու, և որ՝ առանց պսակի կին առնէ, և որ անօրէն և մարդասպան է, և կամ զգէտ հարցանէ, զայնպիսին կապեալ ի դուռն արքունի տարցեն, և դառն մահ ի վերայ դիցեն:

ԻԳ.

ՅԱՂԱԳՍ ՔՆՆՈՒԹԵԱՆ ԻՐԱՑ ԵԿԵՂԵՑԻՈՑ՝ ԵՒ ԵԿԵՂԵՑԱԿԱՆՆԱՑ Ի ՁԵՒՆ ԺՈՂՈՎՈՑ.

Առաքելոց ի ձեռն կղէմայ. ի կթ ի կ ճք

Երկիցս ի տարւոջ ժողով լիցի եպիսկոպոսաց, և քննեսցեն առ միմեանս զհրաման բարեպաշտութեան, և զպատահեալն եկեղեցական ընդդիմաբանութիւնս լուծցեն, միանգամ ի չորրորդ շաբաթու պենտիկոսաէիցն, և երկրորդն՝ յաշնան:

Եպիսկոպոս ամբաստանեալ առաջի հաւատարմաց ոմանց, կամ հաւատացելոց, կարդալ զնա հարկաւոր է եպիսկոպոսաց, եթէ եկեալ խոստովանեսցի, յանդիմանեալ զնա սահմանեսցի պատուհասն, ապա եթէ՝ կարդացեալ ոչ լուաւ, կոչեսցի երկրորդ անգամ ի ձեռն առաքելոց առ նա երկուց եպիսկոպոսաց, ապա եթէ և այսպէս ոչ լուիցէ, կոչեսցի երրորդ անգամ դարձեալ երկուց եպիսկոպոսաց առաքմամբ, ապա եթէ և այնպէս արհամարհեալ դիմադարձեսցի. ոչ գալով ի ժողովն, մճիռ վասն այնպիսոյն հատցի, որպէս ժողովն կամեսցի:

ԻԵ.

ՅԱՂԱԳՍ ՊԱՀՊԱՆՈՒԹԵԱՆ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԸՆԶԻՑ, ԺԱՌԱՆԳՈՒԹԵԱՆՑ, ԵՒ ՏԱՍԱՆՈՐԳԱՑ ԵԿԵՂԵՑԻՈՑ.

Առաքելոց ի ձեռն կղէմայ. լզ հ

Ամենայն եկեղեցական իրաց՝ եպիսկոպոսն կայցի հոգ, և վարեսցէ զնոսա իբրև յԱտուծոյ հայեցեալ, մի լիցի նմա արժան՝ գողանալ ինչ անտի, կամ ազգականաց իւրոց զայն շնորհել, բայց եթէ աղքատք իցեն օգնել, այլ ոչ պատճառանօք սոցա զեկեղեցւոյն օցտել:

Անկերտայ ժզ յգ

Վասն ընչից՝ որ անուանեալ իցէ եկեղեցւոյ՝ զինչ և իցէ, թէ գեւղք, կամ մարգք, և կամ ալ ինչ, և մինչև եպիսկոպոս լեալ էր ի տեղւոջն, և երիցունք վաճառեսցին՝ իշխան լիցի անդրէն ի նոյն

պահանջել, բայց ապա եպիսկոպոսն կշեռացէ զարժանն և զիրաւն՝ թէ մարթէ առնուլ զգինն կամ դարձուցանել:

Նիկիոյ Բ. ին ճղա Անտիոքայ ի յձգ Ոչ է պարտ՝ զեկեղեցւոյ ստացուած, երիցանց՝ վաճառել:

Վասն և կեղեցւոյ իրաց՝ եթէ հակառակութիւն ինչ իցէ կեղծաւորութեամբ. զի լուծցի և ի գլուխ եկեացէ. լաւ համարեցաք, զի ժողով լիցի եպիսկոպոսաց՝ յԼւրաքանչիւր իշխանութեան, երկիցս անգամ յամին, մին՝ յերրորդ շաբաթու տօնից զատկին, իբրև կատարիցի ի չորրորդումն շաբաթու պենտեկոստէին ժողովին առ ի յիշատակել ժողովոյն՝ զիրս իշխանութեան և երկրորդ անգամ՝ ժողով լինել յեսլ հոկտեմբերի՝ որ է տասներորդ Հօռի ամսոյ, զի ի նոյն յայտ ժողովս հպեցին և մերձեցին՝ եթէ երիցունք՝ եթէ սարկաւազունք, և ամենայն ոք, որ վնասեալ և զրպարտեալ համարիցին զանձինս իւրեանց. և ի ժողովոյ անտի իրաւ և օգնականութիւն ընկալցին. այլ մի պատշաճ լիցի ոմանց՝ ժողովս ժողովել՝ առանց կամաց և հաւանութեան, որ իցէ մայրաքաղաքաց եպիսկոպոսն.

Իդ յձէ Զեկեղեցւոյ ինչս՝ եկեղեցւոյ արժան է պահել, ամենայն փութութեամբ այց առնելով բարւոք և հաւատովք. Աստուած՝ որ այցելուն է ամենայնի և վրէժխնդիր և դատաւոր, բաշխել արժան է կամօք և իշխանութեամբ եպիսկոպոսին, սւամ և յանձնաբարեալ իցէ ժողովուրդն՝ և հաւատացեալ է զանձինս ժողովրդոց, յայտ արժան է լինել և զիտակ, որ անկ ինչ իցէ եկեղեցւոյն և սեպհական, հանդերձ կամօք երիցանց, և սարկաւազաց, զի նոքին զիտակ իցեն, և մի անգէտ՝ զինչ ոք ուստեք եկեղեցւոյն ընդ սեպհական է, զի մի թաքիցէ ի նոցանէ. զի թէ՛ դէպ լինիցի Սպիսկոպոսին փոխիլ յաշխարհէ աստի, յայտ իցեն ինչք եկեղեցւոյն, և ոչ սուգանիցին և կորնչիցին և անհետ լինիցին. զի մի և որ սեպհական և ուրոյն է եպիսկոպոսին՝ այն զրեացի ի պատճառս եկեղեցւոյն ընչիցն. զի արդար և հաճոյ է աստուծոյ և մարդկան, որ ինչ իւր իցէ եպիսկոպոսին, իշխան է թողուլ՝ սւամ և կամիցի, և մի եպիսկոպոսն ի պատճառս եկեղեցւոյն ի հրապարակս և ի դատաստանս անկանիցի վասն ընչից որ նմա անկ էր, զի մի յետ մահուն դարովեսցի և հայնոյեսցի:

Իդ յձբ Եպիսկոպոսի իշխանութիւն ունել արժան է ի վերայ ընչից եկեղեցւոյն, զի բաշխեացէ կարօտելոց՝ ամենայն հեզութեամբ և երկիւղածութեամբ աստուծոյ, իբրև վայելեսցէ և ինքն ըստ արժանի

և պիտոյ ևս իցէ ի կարևոր պէտս իւր, և որ ընդ նովաւ կարօտ իցեն՝ իշխան լիցի առ ի կարօտութիւն եղբարց և ի հանգիստ. զի ամենայնիւ մի ինչ կարօտեալ լիցին, ըստ աստուածային առաքելոյն՝ որ ասէ, ունիմք կերակուր և հանդերձ՝ ի նմին բաւական լիցուք. ապա թէ ոչ այսու շատ լիցի, և փոփոխեացէ զիրս՝ և վատնեացէ ի պէտս իւր և տան իւրոյ, և զչնորհ եկեղեցւոյ և զպտուղ զիւղից ոչ կամօք երիցանց և սարկաւազաց ձեռնամուխ առնէ զոն կամի, այլ և ընտանեաց և ազգականաց, և եղբարց և որդւոց տացէ զիշխանութիւնս, իբրև սոքօք ինչ հնարիցի ծածուկ վատնել այլոց ընտանեաց զեկեղեցւոյն. այնպիսին դատ տացէ և իրաւ՝ ժողովոյն իշխանութեան այնորիկ, ապա եթէ՝ այլ ևս ինչ չարախօսեացի եպիսկոպոսն՝ հանդերձ երիցամբք որ ընդ նմայն են, իբրև այն թէ՛՝ եկեղեցւոյն անկ իցէ; կամ ի գիւղից կամ յայլմէ պատճառանաց եկեղեցեաց՝ յանձինս իւրեանց ժողովիցեն և ազահիցեն, և աղքատք նեղեացին, և չարախօսութիւն և հայհոյութիւն անցեն ի վերայ բանին դնելոյ, և այսպիսի ինչ վարս վարիցին կամ վարիցին, զայսպիսիս ուղղել արժան է ըստ իրաւին. զօրէնն զնորեացէ ժողով եպիսկոպոսաց. ևս Սևեբիոս ամենայնի որ սահմանեցաւ և որոշեցաւ, իբրև անդ էի և յանձին կալայ: ևս Թէոդոս ամենայնի զինչ և սահմանեցաւ հաճեցայ, և յանձին կալայ:

Բարսիլ Բ.
ձդ չծթ

Եթէ որ ուտէ եկեղեցւոյ իրս, տացէ ընդ միոյն չորս, ապա եթէ ոչ՝ ապաշխարեացէ ըստ գործոյն հրամանաւ քահանային:

Ս. Սահակայ մեծի
ծք ոճիւ

Ղխանք զգեօղս և զդաստակերտոս, և զգանձս ոսկւոյ և արծաթոյ, այլք յանդաստանաց և ի պաճարաց և ի հանդերձից պատուականաց, ոմանք վասն անձանց փրկութեան, կէսք յաղազս սիրելեաց և ծնողաց և վախճանելոց, հատուցանել հատուցմունս զարդ և պայծառութիւն կազմելով հոգւոց և մարմնոց. քանզի անսայթաք յորդորութեամբ տէրունական բանն զգուշացուցանէ ծառայից և պատուիրանապահաց իւրոց՝ թէ զանձեցէք ձեզ գանձս յերկինս, ուր ոչ ցեց և ուտիչ ապականեն, և ոչ գորք ական հատանեն և գողանան, և թէ դատարկաձեռն ամենին մի հրեեսցիս առաջի իմ, չեն ասէ այգբէն յերկրի իւրական տուրքդ ձեր, այլ ի կատարս բարձրութեան երկնից՝ յանսխալ և յանվրէպ գանձարանին:

Ճգ ոճիւ

Տեսանես զի աստուծոյ են ինչքն, քանզի իւր համարի զտուրսն մեր՝ և ոչ մարդոյ ումեք, բայց միայն պահապան և վերակացու է տեսուչ եպիս-

կոպոսն, բազմապատիկ զգուշութեան պէտք են ե-
պիսկոպոսին՝ և երկիրդի, զի եթէ ոք՝ զմարդկան-
աւանդս կամ զպարտս հոգան և աշխատութիւն կը-
րեն՝ ըղձանալով թէ երբ վճարեսցեն, և թէ դէպ
լինիցի փոքր ինչ ծախել, գիր առնեն և վկայս կա-
ցուցանեն և երդումն, զի մի երևեսցին թիւրք և
գողք ի գործս իւրեանց. իսկ աստուած՝ որ քննիչ
է խորհրդոց մերոց, և չիք ինչ նմա գաղտնի, այլ
ամենայն ինչ մերկապարանոց կայ առաջի աչաց-
նորա, զինչ պատճառս և հնարս հնարեսցէ եպիս-
կոպոսն, յորժամ զաւանդն արքունի զգուշութեամբ
ոչ պահիցէ, և ծախիցէ այնոցիկ՝ որոց ոչ իցէ օրէն,
այսպիսի ինչ յորժամ աւելի զգեստիւք պննիցէ զինքն,
և փերկետիցի սիգութեան և փափկութեան պարա-
պելով, և ազգականացն զեղուցու, և տացէ, և բա-
րեկամս աննմանս յաճախիցէ, շնորհուկս առնելով
ձուխոց և մեծատանց, այն է՝ չարաչար վատնել զար-
քունիսն՝ և պատժոյ լինել արժանի:

Սրճնի կա-
թուղիկոսի
ժդ. ումիթ

Որք չև հասեալ ի ժողովրդականաց՝ այն որ
ի նեղութենէ հարկաց՝ անձինք հասանին ի վաճառ
և սակաւ ինչ գոյութիւն լինի, և վաճառեսցէ զեկե-
ղեցի կամ զսպաս սրբութեան, կամ ի կարասոյ,
կամ յանդաստանաց եկեղեցւոյ, նզովեսցի յաստուծոյ
և ի մէնջ, և զայնպիսին մի ոք կոչեսցէ քրիստոնեայ:

Բ. Ժողովոյն
Գունոյ
Ե. ումկբ

Վասն շնորհի և ժառանգութեան սահմանե-
ցաք թէ ի սկզբանէ որպէս ի հրամանէ սրբոյն Գրի-
գորի լեալ, նոյնպէս եղիցի՝ որոյ չատ է ժառանգու-
թիւն, զչատն կերիցէ, որոյ սակաւ՝ զսակաւն կալցի,
և մի ըստ ծխոց բաժանեսցին զչնորհն, զի ժառան-
գութիւն սրբոյ եկեղեցւոյ իբրև զազատութիւն է,
զոր երանելոյն սրբոյն Գրիգորի՝ և թագաւորին
Տրդատայ զատուցեալ են.— Արդ՝ զիւրաքանչիւր հա-
րանց զժառանգութիւն կալցին, և սրբոյ եկեղեցւոյ
պաշտամանն հպատակ կացցեն, և վարդապետին ի
հնազանդութեան ամենայն յօժարութեամբ: Արդ՝
եթէ ոք ծուլանայցէ, և զլոյս և զպաշտօն եկեղեց-
ւոյն խափանեսցէ, և զմանկունս ուխտին ի դպրոց
ոչ տացէ, ի շխանութիւն լիցի եպիսկոպոսին խրա-
տել և սծել ի կարգ ուղղութեան:

Վաչագանայ
Աղուանից
արքայի
ժէ ումղե

Եւ որ տասանորդս տան, ազատ մարդիկք,
զկէսն ի բուն եկեղեցին սացեն, և զկէսն յիւրեանց
եկեղեցին, ի կիւրակէին՝ տէր և ծառայ ի վսամ ե-
կեղեցին երթիցեն յաղօթս, և զյիշատակս յեկեղեցին
տարցեն, այլ անաշխարհիկքն զհոգեստունն յեկեղե-
ցին տարցեն:

ԻԶ.

ՅԱՂԱԳՍ ՊԱՏՈՒԵԼՈՅ ԶԻՇԻԱՆՍԱԻՈՐՍ ԵՒ ՎԱՍՆ ԳՈՐԾՈՑ
ՆՈՑԻՆ

Դու՛նայ սուրբ Յորժամ ազատք պիւրեանց զերգ և զմարդ բաժա-
ժողովոյն նեն, յոլովք չարակնութեամբ առնեն զժառանգա-
թ ումկ ւորս եկեղեցւոյ՝ ջանան ի ծառայութիւն և ի ստրկու-
թիւն արկանել, մոլեալք և մոլորեալք ի հաւատոց
քրիստոնէից:— Զի երանելոյն Գրիգորի և սրբոյն
Տրդատայ՝ զմանկունս սուրբ եկեղեցւոյ ընդ ազա-
տաց տոհմին են կարգեալ, և ազատ էին սրբոյ եկե-
ղեցւոյ հող և ջուր, նաև ի պարսից իսկ տէրու-
թեան յայտարարեալ, և չէ խառնեալ ի շինական
իշխանութեամբ զերիցունեաց տունսն ի գիւանին
եղեալ են. բայց միայն զհասն տալ յարջունիս:—
Արդ եթէ ոք ազահութեան ակամբ հայեացի, և զա-
զատ մանկունս եկեղեցւոյ՝ ի բաժին և ի վիճակ
ծառայութեան արկցեն, այնպիսիքն ի սուրբ լուսա-
ւորչի օրհնութենէն և ի մերմէ ժողովոյս հեռի ե-
ղիցին, և մի եղիցի իշխանութիւն վարդապետաց և
քահանայից, զայնպիսեաց պատարագն օրհնել: Այլ
և ոմանք յազատաց ըստ իւրաքանչիւր կամաց բա-
ժանեն զչնորհս եկեղեցւոյ, և զառաջնորդաց զիշխա-
նութիւն և զգործ յափշտակեն, և վարդապետաց հրա-
մանի և մեր կանոնիս ունկնդիր չլինին այնպիսի
յանդգնեալքն, որ գործեն զանհաճելիսն աստուծոյ,
հեռի եղիցին ի սրբոց և ի մեր օրհնութենէն:

Ժ ումկ Ոմանք յազատաց ի վերայ վանաց իշխանութիւն առ-
նեն, և վանական զորև կամին՝ հանեն և արկանեն,
զոր չէ արժան և օրէն. և ոմանք ընտանեօք ի վանքն
նստին, արհամարհեալք զեկեղեցեալն աստուծոյ, ան-
պատկառելի անամօթութեամբ:— Արդ՝ եթէ լուեալ
մերոյ հրամանիս, դարձցին և թողցեն յառաջնորդս
գտեսչութիւն եկեղեցւոյն՝ կարգել և յօրինել ըստ
հաճոյցն աստուծոյ. այնպիսեացն յառաջագոյն գոր-
ծելեաց յանցանացն թողութիւն լիցի, և ի մեր միա-
բան ժողովոյս օրհնեալ եղիցին, և ժողովութեամբ
և պաղարեքութեամբ՝ և ուխտաւորեալ և նուիրեալ
ընծայիւք երթիցեն ի վանսն և աղօթեսցեն, որպէս
արժանն է յիւրեանց հարանց վաստակս, բայց ժա-
տութեամբ մի իշխեսցեն, զի եղիցին օրհնեալ յաս-
տուծոյ և ի մեր ժողովոյն:

Ժ ա ումկ Ոմանք յազատաց ի վերայ տկարանոցաց իշ-
խանութիւն առնեն, և որպէս ի կենդանեաց հարկս

պահանջեն, և ի կերակուրս և յըմպելիս իւրեանց
գործակալս մատուցանեն կոռուով և պատուհասիւ
նեղեն, և զողորմելի եղբարսն չարչարեն անխղճա-
բար, որում պարտ և արժան էր հոգալ և խնամել
յիւրաքանչիւր վաստակոց, ի կալոյն և ի հնձանէ, և
յամենայն արմտեաց՝ տալ մասն և բաժին, և մխի
թարել զսիրտս նոցա, և բժշկել զվէրս նոցա, զի
եղիցին արժանաւորք մեծաց վարձուց՝ և պարգևաց
ի փառաւոր դայասեան որդւոյն աստուծոյ:

Ժբ ումկթ Ոմանք յագագաց և ուամիկ հեծելոց՝ հասանելով ի
զիւզս ուրեք, թողեալ զգիւզն՝ ի վանս առնեն զե-
ջևանս և յարկս սրբոցն, և զուսանօք և վարձակօք
պղծեն զնուիրեալ տեղիսն աստուծոյ, զոր սոսկալի
է քրիստոնէից լսել՝ թող թէ առնելու—Արդ՝ զվերոյ-
գրեալ կանոն սահմանադրութեան մերոյ՝ խօսեսցին
ի լսելիս լսողաց՝ վարդապետք և երիցունք եկեղեց-
ւոյն, և որք միանգամ ունկնդիրք լիցին և հրամա-
նակատալք, օրհնեսցին ի քրիստոսէ և ի սրբոց վար-
դապետաց՝ և ի մեր միաբան ժողովոյս իսկ եթէ
ըմբոստացեալք և ամբարտաւանեալք արհամարհի-
ցեն, այնպիսիքն եղիցին արհամարհեալք ի վկայիցն
սրբոց և տարագրեալք յամենայն հոգևոր օրհնու-
թենէն:—Ձի վանքդ անուն՝ հանդստարանք են սրբ-
բոց, և օթևանք եպիսկոպոսաց և քահանայից, սար-
կաւագաց՝ և արեղայից և աղքատաց: Սև եթէ ուրեք
եբբէք՝ ազատ, բարեպաշտք, և տիկնայք Աստուա-
ծասէրք կոչեսցին ի սպասաւորացն սուրբ տեղեաց,
մեծաւ երկկողիւ երթիցեն նուիրական ընծայիւք՝ լի-
նել հաղորդ պաշտաման, և աղօթից և օրհնութեանց
պատրաստելոց ի տան տեառն աստուծոյ. արդարև
ըստ այնմ՝ թէ մտից ի տուն քո պատարագօք, և
տաց քեզ՝ զոր խոստացան քեզ շրթունք իմ, և կամ
թէ՝ մի ունայնաձեռն երեւեսցիս առաջի իմ, այլ որ
ինչ բարին է ընդ քեզ բերչիր:—Արդ՝ զայս երկո-
տասան գլուխս, զոր սահմանաւ եղաք, ոչ մտացա-
ծին ինչ՝ այլ ըստ հրամանի հոգւոյն սրբոյ, և ըստ
սահմանի սրբոց հարցն, և սրբոյն Գրիգորի և բա-
րեպաշտ թագաւորին Տրդատայ, և նորին սրբոյն
Գրիգորի լուսաւոր զաւակացն, և որք լսողք լինին,
հնազանդք և կատարիչք այսմ կանոնի, եղիցին օրհ-
նեալք ի հոգւոյն սրբոյ և յամենայն սրբոց աստուծոյ,
և դոցին ժառանգաւորք անվասխճան կենացն՝ երկ-
նից արքայութեանն, յաւիտեանս յաւիտենից, ամէն:
Սա Ներսէս շնորհիւն աստուծոյ՝ նուսատ կաթողի-
կոս հայոց, վասն վերոյգրեալ կանոնիս՝ ամենայն
աթոռակցօք մերովք, սուրբ եպիսկոպոսք հայոց ձեռ-

նարկեալ կնքեցաք, ըստ հրամանի և սահմանի հոգ-
ւոյն սրբոյ, և ընտրելոց նորա:

Ա. Տէր Յովհաննէս՝ ոստան և մարդապետա-
կան եպիսկոպոս. Բ. Տէր Յովհաննէս Հարաքայ ե-
պիսկոպոս. Գ. Տէր Քրիստատուր Բասենոյ եպիսկո-
պոս. Կ. Տէր Իսրայէլ Տայոց եպիսկոպոս. Ս. Տէր
Յովհաննէս մարդաղայ եպիսկոպոս. Ձ. Տէր Յովհան-
նէս Բզնունեաց եպիսկոպոս. Է. Տէր Գրիգոր Ար-
շարունեաց եպիսկոպոս. Ը. Տէր Սեբէոս Բագրատու-
նեաց եպիսկոպոս. Թ. Տէր Գրիգոր Խարխուունեաց
եպիսկոպոս. Ժ. Տէր Սիմէօն Ռշտունեանց եպիսկո-
պոս. ԺԱ. Տէր Իսրայէլ Վանանդայ եպիսկոպոս.
ԺԲ. Տէր Թէոփիլոս Այմունեաց եպիսկոպոս. ԺԳ.
Տէր Ասայէլ Ամատունեաց եպիսկոպոս. ԺԴ. Տէր
Գրիգոր Անձեւացեաց եպիսկոպոս. ԺԵ. Տէր Թէոդո-
րոս Գնունեաց եպիսկոպոս. ԺԶ. Տէր Յակովբոս
Պայունեաց եպիսկոպոս. ԺԷ. Տէր Սամուէլ Մենու-
նեաց եպիսկոպոս: Այս է սուրբ ժողովն՝ հայոց՝ որք
ի Դուին ժողովեցան ի փառս ամենասուրբ երրոր-
դութեան:

Վ աշադանայ Ազատ արանց՝ որչափ իւրեանց դաստակերաքն
են, գերեց առանց եպիսկոպոսի մի՛ իշխեսցեն հա-
նել, և մի՛ եպիսկոպոսն իշխեսցէ հանել առանց
ժը ումղ յոցա և առնել և երկցուն՝ թէ յազատէ և ի ժո-
ղովորականէ վտանգ լինի, զնալ մի՛ իշխեսցէ ա-
ռանց եպիսկոպոսի:

ԺԹ ումղ Ազատ մարդոյ՝ իւր եկեղեցւոյ եթէ սեղան
կանգնէ, կամ նշխարս բերէ, կամ պատարագ առ-
նէ, եպիսկոպոսին հրամանաւ տրասցէ, որչափ իւր
կարողութիւն իցէ, և որ զայս հրաման առնէ և կա-
տարէ, օրհնեալ եղիցի. եւ որ ոչն առնէ, հեռի ե-
ղիցի յեկեղեցւոյ՝ եւ ապա ըստ կարին տուգանս
բերցէ առաջի եպիսկոպոսին, եւ յետ այնր՝ որչափ
տուգան տայցէ մարդն որ ի կանոնս գրեալ է, ընդ
օրհնութեամբ արասցին:

Ժ ումղ Զայս պայման արարին եպիսկոպոսք եւ քա-
հանայք եւ ազատ մարդիկք առաջի արքային, թէ ի
մեր եպիսկոպոսաց եւ յերիցանց, եւ յեկեղեցւոյ բե-
րանոյ օրհնեալ եղիցի թագաւորն թագուհիս հան-
դերձ եւ զաւակովն եւ ամենայն աշխարհովս՝ որ
յայսմ ժողովեալ են օրհնեալ եղիցին. եւ զայս հրա-
ման մատանեցին. մուծիկ արքայ, եւ հրամանատար
միրհօրիկ. հազարապետ, ասկապետ, Մարութ տի-
րազդ, ասպրակոս յամայիբ կուրաստան. որք էք
Վարդան քաջ, գարմանատէր. Խուրս գերմանոսան,
Խոսկեան փրորդ նահապետ, եւ ամենայն ազատք

Աղուանից՝ վասն առաւել գրոյս Վաչագանայ արքայի Աղուանից՝ մատանին եղաւ ի վերայ:

ԻԷ.

ՅԱՂԱԳՍ ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳԵՐԱԿԱՅՈՒԹԵԱՆ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՅ

Աւաբելոյ ի ձեռն կղէմայ.

ԼԲ ԿԳ

Ջեպիսկոպոս իւրաքանչիւր ազգի գիտել պարտէ զիւրեանց առաջինսն, եւ համարել պարտէ իբրեւ զգլխաւոր, եւ մի ինչ աւելորդ առնել առանց նորա կամաց, բայց զայն միայն իւրաքանչիւր ումեք՝ որչափ իւրում իշխանութեանն անկէ եւ որք ընդ նովաւ տեղիքն են, այլ եւ ոչ նմա առանց նոցա կամաց առնել ինչ. զի այսպէս միաբանութիւն իցէ եւ փառաւորեսցի Աստուած ի ձեռն Յիսուսի եւ սրբոյ Հոգւոյն:

ԼԴ ԿԸ

Եթէ որ ձեռնադրեալ եպիսկոպոս՝ ոչ ընկալաւ զպաշտօնն եւ զհոգ ժողովրդեանն, սա որոշեալ լիցի՝ մինչեւ ընկալցի, նոյնպէս երես եւ սարկաւագ: Ապա եթէ՛ երթեալ՝ ոչ եղև ընկալեալ, այս ոչ ի նորա կամաց, այլ ի ժողովրդեանն խստութենէ. ինքն եղիցի եպիսկոպոս. իսկ ժառանգաւորք քաղաքին որոշեսցին, զի այնպիսի ժողովրդեան խրատիչք սչ եղեն:

ԼԾ ԿԴ

Հրամայեմք եպիսկոպոսի իշխանութիւն ունել եկեղեցական իրաց, քանզի եթէ զպատուական մարդկան ոգիս նմա հաւատալի է, առաւել եւս իրաւացի զիրս կատարել. որպէս զի ըստ իշխանութեան նորա խնամ ունել կարօտելոցն, եւ ի ձեռն երիցանց եւ սարկաւագաց լինել խնամակալութիւն երկիւղիւ Աստուծոյ, եւ ամենայն զգուշութեամբ առնուլ՝ եւ ինքեանք իսկ եթէ կարօտ ինչ իցեն եւ յօտարաց եղբարց ի պէտս, զի մի ինչ իրօք նոցա պակասութիւն լիցի: Վասն զի օրէնք Աստուծոյ հրամայեալ են, որ սեղանոյն պարապեալ են, ի սեղանոյ անտի կերակրել. ըստ որում եւ ոչ զինուորն իւրովք թոշակօք զզէնս պատերազմաց բերէ:

ՃԴ ՃԺԸ

Եպիսկոպոսպօղ զէտ լիցին, գլխաւորք եւ հրամանատարք ի վերայ երիցանց եկեղեցւոյն, որք են ի զիւրս եւ յագարակս, զի երեսեսցի գլուխ եւ առաջնորդ ամենեցունց. զի ի ձեռն նորա խնդրեսցին ամենեքին. քանզի եւ Սամուէլ՝ այնպէս շրջէր ի տեղուջէ ի տեղի, եւ ոչինչ առնոր ի տանէ պաշտօնէիցն եւ յընչից նոցա, եւ ոչ տրամեցուցանէր

դնոսա՝ այլ այց առնէր եւ կարգէր եւ հրաման տայր, նկիւյ
 զ ճծբ Նախնեաց սովորութիւն կացցէ յՍգիպտոս-
 զի Աղէքսանդրու եպիսկոպոսն ամենեցուն իշխեսցէ:
 վասն զի եւ Հռովմայեցւոց եպիսկոպոսին այս սո-
 վորութիւն է. նոյնպէս եւ Անտիօքացւոց. եւ յայլ
 իշխանութիւնս պատիւ մեծութեան պահեսցի յեկե-
 ղեցին, եւ ամենապէս այս յայտնի լիցի, զի թէ ոք՝
 ոչ կամօք կաթուղիկ սսին լիցի եպիսկոպոս,
 զայնպիսին մեծ ժողովն որոշեաց, զի մի եւս իցէ
 եպիսկոպոս. ապա եթէ ի միաբանութենէ ամենե-
 ցուն ընտրելով ճշմարտութեամբ ըստ կարգի եկե-
 ղեցւոյն արժանի առնիցեն, Եւ եթէ երկու ուրեք՝
 կամ երեք ըստ անձին անդգամութեան կամ հակա
 ռակութեան՝ ընդդէմ լինիցին, բաղմաց ընտրութիւնն
 հաստատեսցի:

է ճծգ Վասն զի սովորութիւն կալաւ եւ կարգը նախ-
 նեաց. զի Երուսաղէմի եպիսկոպոսն պատուեսցի,
 ընկալցի ըստ կարգին զպատիւն, զի մայրաքաղա-
 քացն ըստ արժանոյն պահեսցի պատիւն:

Նկիւյ Բ. Պարտէ Երուսաղէմի եպիսկոպոսին՝ զմայրա-
 է ճնգ քաղաքին ունել զպատիւ:

հե մխա Պարտէ զմայրաքաղաքի եպիսկոպոսն, որ ի
 գաւառի եկեղեցիք են ունել հոգ, եւ առանց նորա
 ոչ կացուցանել եպիսկոպոս:

ձբ մխը Պարտէ եպիսկոպոսին ամենայն իրաց ունել
 իշխանութիւն եկեղեցականաց. եւ որպէս կամի մա-
 տակարարել ի կարօտեալս. իսկ եթէ ինքն կարօտ
 է՝ ի հարկաւոր պէտսն վարեսցէ, ոչինչ ստգտեալ:

Անակոքայ Ոչ յուրաքանչիւր իշխանութեան եպիսկոպոսը
 թ յնգ իցեն, իմացին՝ զի մայրաքաղաքաց եպիսկոպոսն
 թիկունք է նոցա, եւ հոգաբարձու, եւ ամենայն ոք
 զինչ եւ պատասխանի կամի առնել, առ նա ընթա-
 նայ, թէ մուրհակ արքունի իշխանաց՝ վասն իրաց
 եկեղեցւոյ, եւ կարգաց հասարակաց. վասն այսորիկ
 կամ եղեւ՝ թէ պատուով յառաջ իցէ, առանց նորա
 մի իշխեսցեն ինչ գործել. ըստ նախնեացն սովո-
 րութեան՝ հարցն մերոց, որպէս կարգեալ են կա-
 նոնք. բայց միայն զայս իշխեսցէ՝ գործել յիւրում
 իշխանութեան. եթէ գիւղք և եթէ գաւառք, եթէ
 օժումն սարկաւազութեան և երիցութեան, կամ
 զինչ վարք իցին իւրոյ գաւառին, և իշխանութեան,
 ամենայն ճշմարտութեամբ և հոգաբարձութեամբ և
 ընտրութեամբ և ինձամով գործեսցէ, այլ այրոց ա-
 մենկին մի իշխեսցէ գործել, և ձեռնամուխ լինել
 արտաքս քան զկամս մայրաքաղաքին եպիսկոպոսի,

